# ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## *N ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/16-2014/5*

ք. Երևան «    » «    » 2014թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «    » **ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն    ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Մատակարար» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (Հավելված N 2) Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ***«Բժշկական սարքավորումներ և գործիքներ»*** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Պատվիրատուը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 3):

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Մատակարարը Ապրանքը հասցնում է Պատվիրատուին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

**3.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Մատակարարն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե 3 և ավել անգամ խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Մատակարարը պարտավոր է՝**

3.4.1 Պատվիրատուին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի

/Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն հրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրով Մատակարարի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ( ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Ապրանքի որակը**

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը սահմանված ստանդարտի պահանջներին:

5.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Մատակարարն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Մատակարարը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու).օրինակ /Հավելված N 4/:

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

**9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Մատակարար և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Մատակարարը:

9.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8 Պայմանագիրը կազմված է  էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՄԱՏԱԿԱՐԱՐ |
|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն | ք.Երևան, |
| ք. Երևան, կառավարության 3 շենք | «      » ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հեռ. |
| **Հ/Հ 900000902164** | Հ/Հ |
| ՀՎՀՀ 02551144 | ՀՎՀՀ |
| Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Քրմոյան | Էլ. հասցեն՝ |
| -------------------------------- | -------------------------------- |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

***Հավելված N 1***
« » « » 2014թ. կնքված
***N ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/16-2014/5*** ծածկագրով պետական գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| **Հ/Հ** | **Ապրանքների անվանում** | | **Տեխնիկական բնութագիր** | **Պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ** |
|---|---|---|---|---|
| ***1*** | ***2*** | | ***3*** | ***4*** |
| | Գնման առարկան | քանակ | | |
| N | *Լաբորոտոր պարագաների ձեռքբերում՝ այդ թվում* | | | *Յուրաքանչյուր ապրանքի միավորի գինը՝ առանց ԱԱՀ* |
| **1.** | **Քիթ-ըմպանից նմուշառման զոնդ** | 4000 | Ստերիլ, անհատական փաթեթավորված, միանվագ օգտագործման,սինթետիկ (նեյլոն կամ կապրոն կամ դակրոն) գլխիկներով քիթ-ըմպանից նմուշառման զոնդեր(ISO կամ CE mark առկայություն): Մատակարարման պահից առնվազն 75% պիտանելիության ժամկետ: | |
| **2.** | **Ցենտրիֆուգա՝ ռոտորով** | 4 | Ցենտրիֆուգան նախատեսված լինի ՊՇՌ / PCR հետազոտությունների համար: Նախատեսված լինի նաև մանրէաբանական, կենսաքիմիական, կլինիկական լաբորատորիաների և արդյունաբերական կենսատեխնոլոգիական լաբորատորիաների համար: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Ցենտրիֆուգան ապահովի միաժամանակ խառնում և տարանջատում (Centrifuga/Vortex):<br>Տեխնիկական մասնագրեր՝<br>Շարունակական և իմպուլս կառավարման ռեժիմներ (Continuous and impulse operation modes)<br>Max. RCF՝ ոչ պակաս քան 750 x g<br>Ռոտորի արագությունը (ֆիքված/ fixed)՝ 3500 պտ./րոպ<br>Համալրված լինի 2 ռոտորներներով<br>R-1՝ 12 հատ - 1.5մլ  էպպենդորֆ փորձանոթներ<br>R-2(mix rotor)՝  6 հատ -  2.0մլ, 6 հատ - 0.5մլ և 6 հատ - 0.2մլ էպպենդորֆ փորձանոթներ<br>Արտաքին չափսերը՝ ոչ ավել քան Ե/Լ/Բ 150 × 200 × 150 մմ<br>Քաշը՝ ոչ ավել քան 2 կգ<br>Որակի ISO ստանդարտի առկայություն | |
| **3.** | **Պոլիպրոպիլինեմկրո ցենտրիֆուգային փորձանոթ** | 6000 | Էպպենդորֆ փորձանոթներ 1,5մլ տարողությամբ, թափանցիկ, չափագրված, ստերիլ: /RNase-, Dnase free/, (ISO կամ CE mark առկայություն) (MICROTEST TUBES (Eppendorf), 1,5 ml natural, graduated, with cap, DNase, RNase  free, PP, sterile): 500 հատ/տուփ: Մատակարարման պահից առնվազն 75% պիտանելիության ժամկետ: | |
| **4.** | **ՊՇՌ-ի պոլիպրոպիլինե փորձանոթ** | 9000 | Էպպենդորֆ փորձանոթներ 0,2մլ տարողությամբ ՊՇՌ-ի համար նախատեսված, թափանցիկ, ստերիլ: /RNase-, Dnase free/, (ISO կամ CE mark առկայություն) (MICROTEST TUBES (Eppendorf), 0,2 ml natural, with cap, DNase, RNase  free, PP, sterile): 500 հատ/տուփ: Մատակարարման պահից առնվազն 75% | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | պիտանելիության ժամկետ: | |
| 5. | **Միանգամյա օգտագործման բժշկական ձեռնոցներ** | 80 | Լատեքսային փեռնոցներ, փոշուց ազատ AQL 1.5, չափսը մեծ,միջին 100հատ/տուփում: (Bodyguards natural, latex, powder free disposable gloves, AQL 1.5, size Large,medium box of 100pcs): ISO կամ CE mark առկայություն: Մատակարարման պահից առնվազն 75% պիտանելիության ժամկետ: | |
| 6 | **96 տեղանոց պլանշետներ՝ Light Cycler 480-ի համար** | 2 | 96 պեղանոց պլանշետներ, նաշատեսված LightCycler 480-ի համար: Մատակարարման պահից առնվազն 75% պիտանելիության ժամկետ:  ISO կամ CE mark առկայություն: | |
| Ապրանքների մատակարարման սկիզբ | | | Պայմանագրի կնքման պահից 30 աշխատանքային օր հետո | |
| Ապրանքների մատակարարման ավարտ | | 25.12.2014թ. | | |
| **Ապրանքների մատակարարման վայրը** | | **Պատվիրատուի պահեստ:** | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
**Հ/Հ 900000902164**
ՀՎՀՀ 02551144
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Քրմոյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

ք.Երևան,
«      » ՓԲԸ
Հեռ.
Հ/Հ
ՀՎՀՀ
էլ. հասցեն՝

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

***Հավելված 2***

«    »  «                    » 2014թ. կնքված

***N  ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/16-2014/5***  ծածկագրով պետական գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | **Գնման ենթակա ապրանքների** | | | | **Գնման ենթակա քանակները ըստ եռամսյակների** | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը** | Չափման միավորը | ընդհանուրի գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ | Ընդհանուրի գինը /ՀՀ դրամ/ ներառյալ ԱԱՀ | Երրորդ եռամսյակ | Քանակ | Գումար /առանց ԱԱՀ/ | Գումար /ներառյալ ԱԱՀ/ |
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5*** | ***6*** | ***7*** | ***8*** | ***9*** |
| 1 | Լաբորոտոր սարքեր | Հատ/տուփ | | | | | | |
| **Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը** | | | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ առողջապահության նախարարություն

ք. Երևան, կառավարության 3 շենք

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

**Հ/Հ 900000902164**

ՀՎՀՀ 02551144

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Քրմոյան

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

ք.Երևան,

«      » ՓԲԸ

Հեռ.

Հ/Հ

ՀՎՀՀ

էլ. հասցեն՝

---------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

***Հավելված 3***

« » « » 2014թ. կնքված

***N ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-11/16-2014/5*** ծածկագրով պետական գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| **N** | **ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ** | **ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ 2014թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ, ԸՆԴ ՈՐՈՒՄ՝** | | | | | | | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ (առանց ԱԱՀ)** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | |
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5*** | ***6*** | ***7*** | ***8*** | ***9*** | ***10*** | ***11*** | ***12*** | ***13*** |
| **Ծրագիր** | | | | | | **Բաժին 07 Խումբ 06 Դաս 01 Ծրագիր 13** | | | | | **Հ/Հ 900000902164** | |
| 1 | Լաբորոտոր սարքեր | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

* Գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
**Հ/Հ 900000902164**
ՀՎՀՀ 02551144
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Քրմոյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**
ք.Երևան,
« » ՓԲԸ
Հեռ.
Հ/Հ
ՀՎՀՀ
էլ. հասցեն՝

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
___ ________________ « » « » 2014թ. կնքված
***N ՊՀՀՏ-ԾՀԱՊՁԲ-11/16-2014/5*** ծածկագրով պետական գնման պայմանագրի

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013104063
ՀՎՀՀ 02507171

**Կ ա տ ա ր ո ղ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

___ _________________ **2014թ.**
Պայմանագրի անվանումը՝ ____________________ **պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ____ __________ **2014թ.**
Պայմանագրի համարը՝ N ________________
Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, և Կատարողը՝ ________________, ի դեմս ______________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ___ _______________ **2014թ.** պատասխանատու ստորաբաժանման **N__** եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատուցված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ___ _______________ **201_թ.** -ից ___ _______________ **201_թ. – ը** ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ Ծառայությունը.

| Ծառայության անվանումը և համառոտ նկարագիրը | Ծառայության քանակական ցուցանիշը | Ծառայության մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Ծառայությունն ընդունեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն________________________
Կ.Տ.

Ծառայությունը հանձնեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն________________________
Կ.Տ.